Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆԻ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Համայն հայության հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Ավետման տոնի կապակցությամբ Հայրապետական Մեր օրհնությունն ենք հղում մեր ժողովրդի զավակներին և Մայրության ու գեղեցկության օրվա առիթով շնորհավորում բոլոր կանանց:

Ավետման տոնի խորհուրդը նորոգում է մեր հոգիներում հույսը, հավատն ու մխիթարությունը, որ Տերը մեզ հետ է: Հրեշտակաձայն այդ ավետիսը, որի առաջին շնորհընկալն էր Սուրբ Աստվածածինը, թող նոր հնչողությամբ արձագանքի ձեր հոգիներում՝ կոչելով վստահել Աստծուն, լինել Աստծո հետ, ինչպես մեր նախնիք 1700 տարի առաջ և 1700 տարիներ ի վեր:

Ի խորոց սրտի Մեր աղոթքն է, որ Տերը Ամենօրհնյալ Սուրբ Աստվածամոր առաքինազարդ հոգու շնորհներով զարդարի և մայրության բերկրանք պարգևի ձեզ, սիրելի կանայք, շնորհելով խաղաղ կյանքի բարօր ու երջանիկ երկար օրեր: Թող Աստվածամոր գթառատ բարեխոսությամբ Միածին իր Որդու օրհնությունը միշտ հովանի լինի ձեզ: